ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
18.03.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ***
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

| | |
|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
| 1.1 Լրիվ անվանումը | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 02534714 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. 22 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.02922 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2004-09-22 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374)012587573 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | 77.varm@mail.ru |

| | | |
|---|---|---|
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ՍԻՄՈՆ | Ազգանունը<br>ԵՍԱՅԱՆ | Պաշտոնը<br>նախագահ |

| |
|---|
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը |
| Միավորումը  իր գործունեությունը իրականացնում է  օրինականության, իրավահավասարության, ինքնակառավարման, անդամների շահերի ընդհանրության , անդամության կամավորության սկզբունքներով: Միավորումը քաղաքական նպատակներ չի հետապնդում և որևէ կուսակցության չի հարում: Ակտիվորեն մասնակցում է  ՀՀ  հասարակական և սոցիալ-տնտեսական կյանքին, պաշտպանում է միավորման անդամ բոլոր վետերանների օրինական շահերը, այդ նպատակով համագործակցում է պետական կառույցների, բարեգործական, հասարակական միավորումների և շարժումների հետ: |
| Աջակցում է պետական իշխանության և տեղական մարմինների գործունեությանը, բազմակողմանի կապեր է հաստատում և համագործակցում ԱՊՀ և մյուս պետությունների վետերանական կազմակերպությունների հետ: Պաշտպանում է վետերանների անձնական, սոցիալ-տնտեսական , աշխատանքային իրավունքները,ձգտում բարելավելու նրանց նյութական բարեկեցությունը, բնակարանային պայմանները,հասնելու նրանց արտոնությունների  և կենսաթոշակային վիճակի բարելավմանն ու պահպանմանը:  Ակտիվորեն մասնակցում է երիտասարդությանը ռազմա-հայրենասիրական դաստիարակության, |
| ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու գործին,փոխանցում է իր լավագույն ավանդույթները աշխատանքում և բարոյա-հոգեբանական ասպարեզում: Հանդես է գալիս որպես համամարդկային արժեքների և մարդու իրավունքների պաշտպան:Հանրապետության պետական ու տեղական բոլոր մարմինների և հասարակական Միավորումների հետ հոգ է տանում մարտական և աշխատանքային փառքի հուշատախտակներ, |
| հուշարձանները,հուշակոթողները, հուշահամալիրները, զինվորական գերեզմանները կանոնավոր վիճակում պահպանելու և Հայրենիքի պաշտպանների հիշատակի հավերժացման հետ կապված միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու մասին: |

| | |
|---|---|
| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
| 4.1 Անդամների թիվը | 35 |
| 4.2 Կամավորների թիվը | 1500 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 3 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 80-ամյակին նվիրված նվիրաբերություն | ՀՀք.Երևան ,,Գազպրոմ Արմենիա,,  ՓԲԸ | Միանվագ օգնություն Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին | Ավարտված |
| 2 | Նվիրատվություն | ՀՀ ք, Աբովյան ՙԳագիկ Ծառուկյան՚ ԲՀ | նվիրատվություն, անհատույց օգնություն | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Սոցիալական ապահովություն | ՀՀ ք. Երևան | Ավարտված | Աջակցություն ՀՀտարածքում վետերանի կարգավիճակ ունեցող շահառուների նյութական, կենցաղային պայմանների բարելավման: | Հայրենական Մեծ պատերազմի վետերանների բարեկեցությանը ուղղված աջակցություն |
| 2 | Նվիրատվություն | ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան | Ավարտված | Գումարը օգտագործել կազմակերպության տարածքի պահպանման , շահագործման ծախսերը հոգալու և այլ կարիքների համար: | Տարածքի պահպանմանը և շահագործմանը ուղղված ծախսեր |
| 3 | Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպություններին | Երևանի քաղաքապետարան | Ավարտված | Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 80-ամյակին նվիրված Երևան քաղաքում բնակվող Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին ֆինանսական աջակցություն | Ֆինանսական աջակցություն ՀՄՊ վետերաններին |
| 4 | Ֆինանսական օգնություն | ՀՀ ք.Վանաձոր , համայնքապետարան | Ավարտված | Աջակցություն վետերաններին | Ֆինանսական օգնություն ՀՄՊ վետերաններին |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 34,486,483 |
| 8.2 Գույքը | 290,000 |
| Ընդամենը | 34,776,483 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 19,938,583 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 2 | 480,000 | ՀՀ ք, Երևան , Աջափնյակ վարչական շրջան |
| 3 | 2,000,000 | Երևանի քաղաքապետարան |
| 4 | 300,000 | ՀՀ ք.Վանաձոր, համայնքապետարան |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 22,718,583 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 31,985,687 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | թեթև մարդատար | 290,000 |
| Ընդամենը | | 32,275,687 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 22,718,583 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 22,718,583 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________2________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________________

ստորագրություն, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ

"Four A Consulting" CJSC

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

audit accounting advisory assurance

## Անկախ աուդիտորական եզրակացություն

« Մարշալ Բաղրամյանի անվան վետերանների միավորում » Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել « Մարշալ Բաղրամյանի անվան վետերանների միավորում» Հասարակական Կազմակերպության 2025թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ այսուհետև Հաշվետվություն:

Մեր կարծիքով, « Մարշալ Բաղրամյանի անվան վետերանների միավորում» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2025թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար "Հասարակական Կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

### Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

### Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական

խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

05 մարտ 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ ԷՅ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» "FOUR A CONSULTING" 00148693 YEREVAN REPUBLIC OF ARMENIA JOINT-STOCK COMPANY

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 19.03.2026 12:17